ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 30 հունիսի 2016Ã.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբª Հ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով Էմմա Վարդանյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Էմմա Վարդանյանը 09.06.2016թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան խնդրելով՝ «Որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ /3-րդ մաս/, 28-րդ, 29-րդ, 60-րդ /1-4-րդ մասեր/, 61-րդ /1-ին մաս/, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

Ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգության բացման վայրի նոտարին դիմում ներկայացնելու եղանակով և ժառանգված գույքը փաստացի տիրապետելու կամ կառավարելու եղանակով: ՀՀ

քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածով որևէ կերպ հստակեցված չէ ժառանգության հիմքը, որևէ վերապահում նախատեսված չէ առ այն, թե սահմանված երկու եղանակները ժառանգության ընդունման որ եղանակին են վերաբերում՝ ըստ օրենքի թե՝ ըստ կտակի:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ Սահմանադրության 60, 28, 29, 78, 79, 80 և 81-րդ հոդվածների դրույթներին համահունչ մեկնաբանությամբ՝ վիճարկվող դրույթը պետք է ենթադրի ժառանգության ընդունման համար նախատեսված երկու եղանակների կիրառումը բոլոր հիմքերով ժառանգության ընդունման, այդ թվում՝ ժառանգության պարտադիր բաժնի ընդունման դեպքում:

Դիմողը գտնում է, որ իրավական որոշակիության պահանջներին չհամապատասխանող՝ սույն դիմումով վիճարկվող դրույթների կիրառման արդյունքում անհամաչափորեն սահմանափակվել են իր՝ սեփականության և դատական պաշտպանության իրավունքները, խախտվել են օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի սկզբունքները:

Միաժամանակ, դիմողը միջնորդություն է ներկայացրել պետական տուրքի վճարումից իրեն ազատելու վերաբերյալ:

2. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ առկա չեն Էմմա Վարդանյանի դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Էմմա Վարդանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Էմմա Վարդանյանին ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

30 հունիսի 2016 Ãí ³ Ï ³ ÝÇ
ê ¸ ¸ Î à/2-18